

361  
2-24

4

ԿՈԶ - ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ  
ԿՈՄԻՏԵԻ**

ԵՒ

**ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ  
ԽԱԶԻ**

**ՄԻՈՒԹԵԱՆ  
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ**

ՊՀԿԽ-ի եւ ՀՕԿ-ի Անդամներուն,  
 Խորհ. Հայաստանի բոլոր բարեկամներուն,  
 Ընկերուհիներ, Ընկերներ եւ բարեկամներ,

Հայաստանի Օգնութեան Կոմիտէն եւ Պետական Հայ Կարմիր Պաշքը, Խորհրդային Հայաստանի կողքին անխախտօրէն կանգնած այս երկու կազմակերպութիւնները, պատմական միացեալ համագումար մը ունեցան Սեպտեմբեր 4-6, 1937-ին, Պոսթոնի մէջ:

Վերջին տասնամեակի ընթացքին դումարած տարեկան հաւաքոյթներուն նման, այս համագումարը դարձեալ հաստատեց Ամերիկահայութեան մեծամասնութեան դէպի Խ. Հայաստան տաճած հաւատքն ու խանդավառ սէրը: Ան նոյնպէս կենդանի մէկ արտայայտութիւնն եղաւ այն իրողութեան, թէ յետ այսու եւս Ամերիկահայ գաղութը պիտի շարունակէ տալ իր նիւթական եւ բարոյական սրտաբուլիս օժանդակութիւնը, սատարելու համար մեր հայրենիքի հոյակապ վերելքին: Ան պիտի շարունակէ աւելի լայնօրէն ծանօթացնել Խ. Հայրենիքի իրականութիւնը եւ հակազդել ու պարտութեան մատնել թշնամիներու սուտերը, զրպարտութիւններն ու յարձակումները:

Այս վերջին համագումարը նախորդներէն աւելի բարձր հայրենասիրական հասկացողութեան եւ հասունութեան ապացոյցը տուաւ: Այդ արդիւնքն ու արտացոլացումն է Խ. Հայաստանի փառահեղ նաճումներուն, ինչպէս եւ Ամերիկահայ զանգւածներու զարգացման, Ամերիկեան Ժողովուրդի առաջաւոր ուժերու մակընթացութեան ճանապարհով: Համագումարն ընդունեց Միութեան սկզբունքը — ՀՕԿ-ը եւ ՊՀԿԽ-ը միաձուլելով՝ Խ. Հայաստանեան առաջաւոր մէկ հատիկ մեծ կազմակերպութիւն ու-

ներկալու առաջարկը: Այս առնչութեամբ, միացեալ նիստն ընդունեց Ուժերու Համադրման հետեւեալ բանաձեւը.—

«Պետական Հայ Կարմիր Խաչի եւ Հայաստանի Օգնութեան Կոմիտէի Միացեալ Համագումարը՝ երկու կազմակերպութիւններու կեդրոնական վարչութեանց ուժերու համադրման ուղղութեամբ առած քայլերը կը գտնէ համապատասխան հորհրդային Հայաստանի եւ մեր գոյգ կազմակերպութեանց շահերուն եւ ներկայի պահանջներուն եւ կը հրահանգէ անոնց անյապաղ կենսագործումը: Այդ քայլերն են.— բոլոր ձեռնարկներու միասնաբար կատարումը, միացեալ օրգանի հրատարակութիւնը եւ գործիչներու միացումը»:

Այս որոշումը պատահական կերպով չկայացաւ, ոչ ալ քւէարկեցաւ առանց վիճարանութեան եւ լուրջ քննութեան: Ան՝ երկու կազմակերպութեանց անջատ նիստերու ընթացքին նկատի առնուած գլխաւոր խնդիրն էր: Պատգամաւորներու կողմէ ան արժանացաւ սպառիչ քննարկի: Այս կերպով բոլորի մտքին մէջ բիւրեղացաւ այն համոզումը թէ՛ Միութիւնը ո՛չ միայն փափաքելի է, այլ նաեւ ստիպողական պարտականութիւն մը եւ անխուսափելի անհրաժեշտութիւն մըն է, իբրեւ նախապայման Ամերիկայի մէջ Խ. Հայաստանեան, առաջդիմական շարժումի զարգացման:


### ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ

Քննարկի ընթացքին պարզեցաւ, թէ Միութեան գաղափարը հիմնւած է երկու խումբ տրեւաչներու վրա: Առաջինը կարելի է անւանել գաղափարական, իսկ երկրորդը կազմակերպական: Այս առթիւ խրատուսիչ երեւոյթ մըն էր տեսնել,

որ թէեւ կազմակերպական տրեւաչները հանդամանորէն նկատի առնուեցան, եւ սակայն գաղափարականն էր որ տրւած որոշման մէջ մեծադոյն կշիռն ունեցաւ: Ուրիշ խօսքով, միացեալ կազմակերպութեան առջեւ բացւող՝ զարգացման, ազդեցութեան եւ օգտակարութեան աճի հեռանկարն էր, որ հանդիսացաւ որոշիչ ազդակը:

ՀՕԿ-ը եւ ՊՀԿԽ-ը, իրենց անջատ գոյութեան ընթացքին, մեր Խ. Հայրենիքին արժէքաւոր օգնութիւն հասցուցին: Սկզբնական տարիներուն, երբ Խ. Իշխանութիւնը Դաշնակներէն աւերակ երկիր մը եւ սովահար բնակչութիւն մը ժառանգեց, ուստեսեղէնի, հազուատեղէնի, մեքենաներու եւայլն ձեւով զրկուած այդ օժանդակութիւնը մասնաւորապէս անհրաժեշտ էր ու շնորհաւորելի: Իսկ միւս կողմէ, կատարուած ծանօթացման աշխատանքը մեծ չափով չեղողքացուց հայ թէ օտար թշնամի մամուլին յամառօրէն տարածած խեղաթիւրումներն ու նախապաշարումները: Այս ձեւով, Խ. Հայաստանի բազմաթիւ մնայուն եւ նւիրած բարեկամներ շահեցանք, Ամերիկահայութեան բոլոր խաւերուն մէջ: Իսկ վերջապէս, երկու կազմակերպութեանց դործունէութիւնները նպաստեցին իրենց ուրոյն անդամներու (թէ այրերու եւ թէ մանաւանդ կիներու) մէջ գիտակցութեան եւ նախաձեռնութեան ոգիի զարգացման, կազմակերպական ձեւերու ընտելացման, եւ հաւաքական ու կարգապահ աշխատանքի կիրարկման:

Հետեւաբար, կարելի է հաստատապէս ըսել, թէ երկու կազմակերպութիւններն ալ իրենց պատմական դերը կատարեցին ընդհանուր գծերով: Անոնք սխալներ գործեցին եւ թերութիւններ յայտնաբերեցին, որոնցմէ ոմանք անկախ պատճառներու արդիւնքն էին, մինչ ուրիշները արդիւնք կա-



66383-68

րելի էր ապահովարար: Մենք հոս անցողակիօրէն կը յիշենք այս, քանի որ այժմ մեր նպատակը այդ ուղղութեամբ մանրամասն քննարկ բանալ չէ: Պէտք է յայտարարել, սակայն, որ ատոնք առաւելապէս գործադրման եղանակի կամ կիրարկման միջոցներու սխալներ ու թերութիւններ էին, եւ ոչ թէ հիմնական տեսակէտի կամ հասկացողութեան:

Միեւնոյն ատեն, Խ. Հայաստանի եւ արտասահմանեան հայ գաղութներու յարաբերութիւնը խոշոր փոփոխութեան կ'ենթարկէր, իբրեւ արդիւնք մեր Խ. Հայրենիքի հոյակապ վերելքին: Արդիական ճարտարարեւեստի հաստատումը, հողագործութեան հաւաքականացումը, մշակոյթի ծաղկումը, հարեան ժողովուրդներու հետ բարեկամութիւնը, ապրուստի բարձրացող մակարդակը, — այս բոլորը՝ Խորհրդային Իշխանութեան շնորհիւ, եւ Խորհրդային Միութեան ընծայած առատաձեռն օժանդակութեան միջոցաւ իրականացան: Այս իրողութիւնները ծանօթ են լայն զանգաւաններուն, եւ անոնք միտքներ կամ խեղաթիւրել չեն կրնար թըշնամիներու բոլոր սուտերն ու զրպարտութիւնները:

Այս պայմաններուն տակ, փաստօրէն միեւնոյն նպատակները հետապնդող երկու կազմակերպութեանց անջատ գոյութիւնը աւարտած է իր օգտակարութեան շրջանը: Աւելին՝ ան դարձած է զարգացման ճամբուն վրա արդելք մը, խոչընդոտ մը: Միութիւնը նախ պիտի իրագործէ միացեալ կազմակերպութեան մը յատկանիշն եղող յաւելեալ կենսունակութիւնը: Ան պիտի ըլլա կեդրոնաձիգ ոյժ մը, որ իրեն պիտի քաջէ Խ. Հայաստանի համակիր բոլոր տարրերը, որոնք դեռ եւս գործօն դեր չեն առած Խ. Հայաստանի եւ Խ. Միութեան շուրջ գոյութիւն ունեցող յառաջդիմական շարժման մէջ:

## ՄԻԱՑԵԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՈՒՂԵԳԻՄՇԸ

Միացեալ կազմակերպութեան նպատակները հետեւեալներն ըլլալու են. —

1) Ծառայել իբրեւ կամուրջ Ամերիկահայ գաղութին եւ մեր հայրենիքի միջեւ:

2) Հայ զանգաւաններուն ծանօթացնել մեր Խ. Հայրենիքի իրականութիւնը, անոր տնտեսական յաղթանակները, քաղաքական եւ մշակութային նաճումները:

3) Մերկացնել եւ ետ մղել Խ. Հայաստանի թըշնամիներու սուտերն ու յարձակումները:

4) Խ. Հայաստան փոխադրել արտասահմանի հայրենասէրներու կամաւոր նւէրները, եւ օգնել հայրենակցականներու գործին:

5) Զատադուլել եւ լուսաբանել Խ. Միութեան խաղաղութեան քաղաքականութիւնը, որ համապատասխան է հայ ժողովուրդի շահերուն եւ խաղաղասէր աւանդութեանց:

6) Դառնալ ազդակ մը այս երկիրը բնակող Հայերու մշակութային զարգացման մէջ:

7) Զարկ տալ Ամերիկահայ երիտասարդութեան կազմակերպման, եւ զայն բոլորել Խ. Հայաստանեան ու յառաջդիմական շարժման շուրջ:

8) Գործակցել Ամերիկեան այն կազմակերպութեանց, որոնք խաղաղութեան ու դեմոկրատիի պաշտպանութեան գործին մէջ, Միացեալ Նահանգաց եւ Խ. Միութեան ժողովուրդներուն ու կառավարութեանց միջեւ՝ աւելի բարեկամական յարաբերութիւններ եւ արդիւնաւոր գործակցութիւն հաստատել կ'առաջադրեն:

9) Բոլոր հայրենասէր եւ ազատական ուժերու համադրութեամբ, իրականացնել Հայկական Ժողո-

վըրդական ճակատը, որ խաղաղասէր եւ առաջա-  
ւոր մարդկութեան շարքերուն մէջ՝ իր պատուաւոր  
տեղը պիտի գրաւէ :

Այս նպատակներու կենսագործման համար, մի-  
ացեալ կազմակերպութիւնը ուրախութեամբ պիտի  
ընդունի անդամակցութիւնը եւ աջակցութիւնը բո-  
լոր անոնց, որոնք կը սիրեն մեր երկիրը՝ Խ. Հա-  
յաստանը, — որոնք անկեղծօրէն կը ցանկան անոր  
բարգաւաճման: Անոնք, որ նախանձախնդիր են Ա-  
մերիկահայ դաղութի մշակութային զարգացումը  
տեսնելու, — եւ որոնք պատրաստ են առ այդ տը-  
րամադրելու իրենց ժամանակէն, իրենց ջանքերէն  
եւ իրենց նիւթականէն: Մենք կը բաղձանք ասպա-  
հովել ժողովրդի բոլոր խաւերու անդամակցութիւ-  
նը: Մեր շարքերուն կրնան միանալ բանւորներ եւ  
մտաւորականներ, արւեստագէտներ եւ առեւտրա-  
կաններ, այրեր եւ կիներ, քաղաքական եւ ըն-  
կերային զանազան ըմբռնումներ ունեցող անձեր. —  
միա՛կ պայման ունենալով՝ սէր դէսլի Խ. Հայաս-  
տանը եւ աշխատանք անոր յառաջացման համար:  
Մենք վստահ ենք, թէ այն կազմակերպութեան մէջ,  
զոր մենք ունենալ կ'առաջադրենք, ընդարձակ տեղ  
պիտի յատկացւի բազմապիսի տաղանդներու յայտ-  
նարեման, ինչպէս նաեւ բոլոր մասնակցողներու  
ձեռներէցութեան եւ գործունէութեան:

## ՆԻԻԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

Խ. Հայաստանի հետ մեր յարաբերութեանց  
մէջ, նիւթական օժանդակութիւնը պիտի շարունա-  
կէ որոշ դեր կատարել, թէեւ ո՛չ ցարդ հասկցած  
ձեւով: Մեր երկրի զարգացման սատարելու բազ-  
մաթիւ միջոցներ կան, զոր մենք պիտի ձեռնար-  
կենք կամ շարունակենք:

Անժխտելի իրողութիւն է, որ իր հիմնադրու-  
թենէն ի վեր, ՀՕԿ-ը հայրենակցական միութեանց  
զօրավիգ կանգնած է, անոնց Խ. Հայաստանի մէջ  
հաստատած աւաններուն դրամական եւ այլ առա-  
քումները կարգադրելով, խորհրդային հաստատու-  
թեանց հետ գործառնութիւնները դիւրացնելով,  
տեղեկութիւններ հայթայթելով, եւ ուրիշ միջոց-  
ներով: ՀՕԿ-ը նաեւ իր աջակցութիւնը բերած է  
նոր հայրենակցականներ կազմակերպելու եւ զա-  
նոնք շինարարական աշխատանքի շուրջ բոլորելու  
գործին մէջ: Միացեալ կազմակերպութիւնը վերո-  
յիշեալ գործակցութիւնը աւելի լայն չափով պիտի  
շարունակէ:

Հայրենակցական միութիւնները հոյակապ գործ  
կատարեցին, Մերձաւոր Արեւելքի ու Եւրոպայի  
զանազան երկիրներուն մէջ անդաստական իրենց  
հայրենակիցները փրկելով, զանոնք Խ. Հայաստա-  
նի մէջ հաստատելով եւ հոն՝ նոր հիմերու վրա  
կեանքը վերսկսելու պատեհութիւն տալով: Խ. Հա-  
յաստանի մէջ բարգաւաճող Նոր Արարիկիրը, Նոր  
Սերաստիան, Նոր Մալաթիան, Նոր Խարբերդը, եւ  
միւս աւանները, դաղութահայութեան եւ մեր երկ-  
րի միջեւ կենդանի կապերն են: Այս գեղեցիկ գոր-  
ծին համար, հայրենակցականները մեր պատմու-  
թեան մէջ իրենց պատուաւոր տեղը պիտի գրաւեն:

Միացեալ կազմակերպութիւնը հետամուտ պի-  
տի ըլլա, որ կամաւոր նւէրներու ձեւով Խ. Հա-  
յաստան եղած առաքումները շարունակին եւ բազ-  
մանան: Թէ ՊՀԿԽ-ի եւ թէ ՀՕԿ-ի միջոցաւ ցարդ  
հոն զրկած են գիտական գործիքներ, հնագիտա-  
կան առարկաներ, գրքերու հաւաքածոններ, եւ այլն:  
Սա աշխատանքի արժէքաւոր դաշտ մըն է, որուն  
մէջ հազիւ թէ նախնական քայլեր առնւած են, եւ  
որու մէջ կարելի է ասպահովել բոլոր խաւերու գոր-

ծակցութիւնը: Այդ նւերները, սակայն, ողորմութեան կամ նպաստի ձեռով պիտի չըլլան, այլ իբրեւ նւիրաբերում հայրենասէր Հայերու, որոնք Խ. Հայաստանի մէջ մեր բաղմաշարչար ժողովուրդի վերածնունդը կը տեսնեն, եւ անոր ստեղծագործութեան մասնակից ըլլալ կը բաղձան:

Միութեան մասին, վերոյիշեալ հիմնական պատճառներէն զատ, կան նաեւ կարգ մը գործնական տեսլանքեր: Միութեան միջոցաւ կարելի պիտի ըլլա ջանքի, ժամանակի եւ նաեւ դրամական խնայողութիւններ ապահովել: Մասամբ վերջ պիտի դուրս բաղմաթիւ կրկնակ ձեռնարկներուն, որոնք մասնաձիւղերու նիւթական եւ բարոյական միջոցներուն մէկ կարեւոր մասը կը դրուեն, եւ մեր անդամներու ժամանակը կը կլանեն ներքին կազմակերպական գործերով: Յետ այսու կարելի պիտի ըլլա աւելի մեծ թափ տալ դաստիարակչական աշխատանքին, նոր անդամներու ներգրաման, եւ մեր ազդեցութեան ընդլայնման:

## ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Միութեան սկզբունքն ընդունելէ վերջ, միացեալ համագումարը զայն իրականացնելու համար ստեղծեց անհրաժեշտ կազմակերպական մեքենան: Երկու Կեդրոնական Վարչութիւններէն զատ, ան յառաջացուց Միութեան Յանձնախումբ մը, որու պաշտօնն է միութեան յարակից աշխատանքները կատարել, եւ երկու կազմակերպութեանց հասարակաց հարցերուն ընթացք տալ: Այս Յանձնախումբը պիտի ջանա իր վրա դրած պարտաւորութիւնները ամենակարճ ժամանակի մէջ լրացնել եւ միութեան կարգախօսը իրագործել: Առ այդ, մենք պիտի առնենք հետեւեալ քայլերը.—

1) Ծարունակել եւ ընդլայնել երկու Կեդրոնական Վարչութեանց գործակցութիւնը, եւ աստիճանաբար միաձուլել անոնց աշխատանքները: Ծարունակել եւ ընդլայնել երկու կազմակերպութեանց մասնաձիւղերու գործակցութիւնը, եւ միացեալ ձեռնարկներէ զատ, ըստ կարելոյն անդամական եւ դաստիարակչական ժողովներն եւս միասնաբար գումարել: Մասնաւոր ուշադրութիւն դարձնել նոր անդամներու ներգրաման, եւ մանաւանդ կանանց գործունէութեան աշխուժացման, եւ անոնց ձեռներէցութեան զարգացման:

2) Յանձնախումբը կը յանձնարարէ, որ մասնաձիւղերու մէջ անմիջապէս միութեան հարցի շուրջ քննարկ մը սկսւի, որու ընթացքին ամեն անգամ իր կարծիքը յայտնելու պատահութիւն կ'ունենան: Միացեալ համագումարը արդէն ընդունած է միութեան սկզբունքը, իսկ միւս կողմէ այս առընչութեամբ մամուլի մէջ բաւական երկար նախահամագումարեան քննարկ տեղի ունեցած է: Սակայն, անհրաժեշտ է, որ հարցը մասնաձիւղերու մէջ եւ մամուլի միջոցաւ անդամներու կողմէ աւելի հանգամանօրէն նկատի առնուի: Քննարկէն վերջ, մասնաձիւղերու անդամակցութիւնը կը վաւերացնէ որոշումը քննարկութեան միջոցաւ, որու արդիւնքը պէտք է ճամբել այս Յանձնախումբին:

3) Յանձնախումբը պիտի պատրաստէ ծրագիր-կանոնադրի մը նախագիծը, որ իր մէջ պիտի պարունակէ միացեալ կազմակերպութեան անունը, նըստատակները, անդամակցութեան օրէնքները, եւ այլն: Նախագիծը յետո պիտի ճամբուի մասնաձիւղերուն քննարկի համար: Այդ առթիւ եղած բոլոր թելադրութիւնները, փոփոխութեանց, յաւելումներու եւ այլնի մասին, պէտք է ճամբել այս Յանձնախումբին դասաւորման համար:

4) Յանձնախումբը պիտի հրատարակէ միաց-  
եալ ամսաթերթը, փոխան «Կարմիր Սաչ»ին, որ  
ցարդ կը հրատարակէր ՊՀԿՍ-ի կողմէ: Պարբե-  
րաթերթի անունը պիտի ըլլա «Վերելք»: Մենք պի-  
տի ջանանք ապահովել աշխատակիցներու լայն  
չըջանակի մը գործակցութիւնը եւ «Վերելք»ը դար-  
ձնել բազմապիսի եւ կուռ բովանդակութեամբ  
հրատարակութիւն մը, ընթերցողներու լայն շրջա-  
նակի մը հասցնելու յառաջադրութեամբ:

5) Յանձնախումբը մօտ ատենէն դաշտ պիտի  
հանէ միացեալ գործիչներ, որոնք բոլոր մասնա-  
ճիւղերուն պիտի այցելեն եւ ընթացիկ հարցերու  
չուրջ անդամական ժողովներ եւ դասախօսութիւն-  
ներ պիտի սարքեն:

6) Վերոյիշեալ աշխատանքներուն մէջ, այս  
Յանձնախումբը պիտի գործէ երկու Կեդրոնական  
Վարչութեանց ամենասերտ գործակցութեան մի-  
ջոցաւ: Նախապատրաստական քայլերը լրացնելէ  
վերջ, ան պիտի կանչէ արտակարգ համագումար  
մը: Այնտեղ Միութիւնը պիտի վաւերացւի եւ իրա-  
կանանա, մասնաճիւղերէ եւ անդամներէ եկած թե-  
լադրութիւնները նկատի առնելէ վերջ՝ պիտի վա-  
ւերացւի ծրագիր-կանոնագրի վերջնական նախա-  
գիծը, եւ յաջորդ շրջանին համար միացեալ կադ-  
մակերպութիւնը ղեկավարող Կեդրոնական Վար-  
չութիւն մը պիտի ընտրւի:

Ընկերուհիներ, Ընկերներ եւ Բարեկամներ,

Սորհրդային Հայաստանի փառահեղ իրակա-  
նութիւնը դաղութահայ զանգաւածներն արթնցուց  
անյուսութեան եւ անորոշութեան այն մղձաւանջէն,  
որ նախախորհրդային շրջանի ողբերգութիւններն  
էին բերեր: Ելած արթուն եւ յուսավառ եւ կոնա-  
կը դարձուցած հայ յետադիմութեան եւ Փաշիզմի

մութ ուժերուն՝ դաղութահայութիւնը այսօր կանգ-  
նած է Սորհրդային Հայաստանի բարեկամութեան  
եւ պաշտպանութեան ամրակուռ դիրքերու վրա:  
Սորհրդային Հայաստանի այս շքեղ իրականու-  
թեան ծանօթացումն ու դաղութահայութեան անոր  
չուրջ բոլորելը մեր հայրենասիրական ամենա-  
բարձր պարտականութիւնը կը հանդիսանան: ՀՕԿ-ի  
եւ Պետական Հայ Կարմիր Սաչի Միութիւնը այդ  
իրողութեան եւ ըմբռնումի արդիւնքն է:

Երկու կադմակերպութիւններու անդամներն,  
ինչպէս նաեւ Սորհրդային Հայաստանի անկազմա-  
կերպ բարեկամներու եւ համակիրներու ջանքա-  
խիչ մեծամասնութիւնը խանդավառութեամբ կ'ող-  
ջունեն այս ցանկալի միութիւնը: Անոնք պատրաստ  
են իրենց նիւթական եւ բարոյական օժանդակու-  
թիւնը տրամադրելու այդ միութեան իրագործման,  
անոր տարածման եւ հզօրացման գործին:

Ամերիկահայութիւնը յարաճուն թիւերով եւ  
անխախտ հաւատքով կը դիմէ դէպի Սորհրդային  
Հայաստանի բարեկամութեան անառիկ դիրքերը:  
Թշնամի բանակէն անգամ նորանոր ուժեր կուգան  
ընդարձակելու բարեկամներու այդ մեծածաւալ  
բազմութիւնները:

Հեռու չէ այն օրը, երբ բովանդակ դաղութա-  
հայութիւնը — անոր հսկա մեծամասնութիւնը՝  
մէկ մարդու պէս պիտի կանգնի մեր լուսաւոր,  
մեր յաղթական, մեր փառապանծ Սորհրդային  
Հայրենիքի կողքին:

Առաջադրած Միութիւնը՝ դէպի ժողովրդա-  
կան այդ ամրակուռ միասնականութիւնը եւ դէպի  
այդ պայծառ դիտակցութիւնը տանող պատմական  
ուղին է:

Իրագործելով մեր Միութիւնը, անսպառ ե-  
ռանդով եւ հաստատ վճռականութեամբ պիտի

կազմակերպենք ամերիկահայ զանգուածները խորհրդային Հայաստանի բարեկամութեան ճակատին վրա եւ խաղաղութեան ու դեմոկրատիի պաշտպան ամերիկեան առաջաւոր շարժման կողքին:

Դէ՞՞՞՞՞՞՞ չօհ-ի եի Պզկե-ի ՄիՈՒԹԵԱՆ ԻՐԱ-ԿԱՆԱՑՈՒՄԸ:

Դէ՞՞՞՞՞՞՞ ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՄ-ՐԱԿՈՒՌ ԾԱԿԱՏԸ:

ԿԵՑՅԷ՛ չԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՐՁԱՆԻԿ ՉԱՅ-ՐԵՆԻՔԸ — ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՉԱՅԱՍՏԱՆԸ:

ԿԵՑՅԷ՛ ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ ՀՉՕՐ ԵՒ ՊԱՆԾԱԼԻ ԱԽՈՅԵԱՆԸ — ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ:

**ՉԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ  
ԵՒ**

**ՊԵՏԱԿԱՆ ՉԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ  
ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ**

ՓՐՈՑ. ՏԻԳՐԱՆ Հ. ԳԱՊԱԳՃԵԱՆ, Նախագահ  
ԱՐՄԷՆ ՄԻՐԻՃԱՆԵԱՆ, Ատենապետ  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ, Քարտուղար  
ԱՌԱՔԵԼ ԹԱԹԵԱՆ, Գանձապահ  
Կ. ՄԻՏԱԼ  
ԱՐՇԱԼՈՅՍ ՓԻԼԱՅԵԱՆ  
ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Նոյ. 20, 1937  
Նիւ Եոթ, Ն.Ե.





.95

42.918

W D I W D

W D O